

ՍԱՐԴԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մաճուկ Արեղյան, ՀՍՍՀ ԳԱ հրատա-
րակչություն, Երևան, 1970 թ., 668 էջ, գինը՝ 2 ռ. 55 կոպ.:

Պատկառելի մեծություն է Մանուկ Արեղյանը հայ մշակույթի և հայագիտության մեջ:

Արեղյանի կյանքի և ժառանգության ուսումնասիրությունը հիմնականում սկսվեց 1940-ական թթ. երկրորդ կեսից, երբ լույս տեսան Ե. Տեր-Մինասյանի, Խ. Սարգսյանի, Ա. Ղանալանյանի, Ա. Ղարիբյանի, Կ. Մելիք-Օհանջանյանի և այլոց դիտական ուսումնասիրություններն ու հոդվածները: Սակայն այդ հոդվածները և ուսումնասիրությունները սահմանափակվում էին գիտականի կյանքի կամ գործունեության այս կամ այն բնագավառով: Զկար Արեղյանի մասին մի ամբողջացնող և հանգամանալից աշխատություն: Բանագետ Սարգիս Հարությունյանի ներկա աշխատությունը վերացնում է այդ բացը:

Մենադրությունը ամբողջական մի ուսումնասիրություն է մեծավաստակ գիտնականի մասին, ներկայացնում է նրա կյանքն ու գործունեությունը:

Անցյալ դարի 80—90-ական թթ., երբ հանդես եկավ Մ. Արեղյանը, հայ հասարակական և գրական մտքի պատմության մեջ սկսվում էր մի նոր շրջափուլ: Հայ հասարակական կյանքը, մշակույթը և գրականությունը կանգնած էին զարգացման մի նոր ճանապարհի վրա: Պատմական բարենպաստ պայմանների շնորհիվ հայագիտական միտքը աստիճանաբար արևմտքից տեղափոխվում էր արևելք և արմատներ գցում: Այդ առաքելությունը իրենց վրա են վերցնում Գևորգյան և Հազարյան ճեմարանավարտները, որոնք իրենց կրթությունը շարունակում են ռուսական ու եվրոպական համալսարաններում: Զինված ժամանակի գիտությամբ, նրանք լծվում են հայրենանվեր աշխատանքի՝ հայ ժողովրդի մտավոր զարգացման գործին և նպաստում նրա մշակութային արժեքների վերհանմանը և նրանց նոր չափանիշով գնահատմանը:

Այդ նոր սերնդի ամենակարկառուն դեմքերից մեկը Մ. Արեղյանն է, որին վիճակված էր պատմական խոշոր գործ կատարել հայագիտության մեջ:

Ս. Հարությունյանը առաջին անգամ, տպագրված և անտիպ նյութերի, արխիվային վավե-

րագրերի հիման վրա, մանրամասնորեն ներկայացնում է գիտնականի կյանքը, որը մեծ դպրեհրով հագեցած չէ, սակայն հարուստ է իր գիտական բովանդակությամբ:

Գիտնականի կյանքը և գործը դիտվում են իրրև մի միասնություն:

Բանաստեղծություն, մանկավարժություն, րենադատություն, գրականագիտություն, հրապարակախոսություն, բանագիտություն, ազգագրություն, լեզվաբանություն, տեքստաբանություն, բառարանագրություն և այլն,— ահա այն մարզերը, որոնց նվիրվել է Արեղյանը: Ս. Հարությունյանը աչքաթող չի անում և ոչ մի բնագավառ:

Թեև բանաստեղծությունը Արեղյանին փառք չի բերել, այնուամենայնիվ, եղել է մի դպրոց, որի միջոցով երիտասարդի հոգում սեր է արթնացել դեպի հայրենի դրականությունը: Նա առավել մոտիկից է կապվել հայ բանահյուսությանը, սիրել հայրենի ավանդությունները: Դրանք ծառայել են սկզբում իրրև գեղարվեստական մշակման նյութ, իսկ հետո որպես դիտական լուրջ ուսումնասիրությունների առարկա:

Ուսումնասիրողը ցույց է տալիս Արեղյանի կապերը «սոր դար» լրագրի հետ, որտեղ նա հակվում էր դեպի դեմոկրատական տրամադրությունները և պայքարում ազգային ինքնուրույն գրականության, հրապարակախոսության և լրագրության համար:

Արեղյանի մանկավարժական գործունեությունը, որ ծավալվեց Գևորգյան ճեմարանում, Շուշիում, հայկական առաջին համալսարանում և այլուր, ունեցավ իր դրական կողմը: Հրապարակախոս և մանկավարժ Արեղյանը նույնպես նախապատրաստում է գիտնականին: Աստիճանաբար ծնվում են նոր մտադրացումներ և ուսումնասիրություններ: Արեղյանը զարգացնում է այս կամ այն գործնական ու տեսական միտքը: Իվ գործնական ու տեսական այդ միտքերը դումարվելով դառնում են հայագիտության ուսմունք: Բանագիտություն, գրականագիտություն և լեզվաբանություն,— ահա Արեղյանի հիմնական մտասեւեռումները: Սրանցից անբաժան են տաղաչափության, տեքստաբանության և բառարա-

նադրության մարզերը: Հիրավի լայնածավալ բնագավառներ, որտեղ վիթխարի զիտելիքների և մտապաշարի տեր մարդը կարող էր դուրս հանել: Իսլամական հետաքրքրությունների տեր պիտանականի դործն ուսումնասիրողի համար ևս տվյալ դեպքում պարտադիր է, որ ունենա լայն հեռաբերությունների շրջան՝ նախ բաղամբանակ նյութն ընդգրկելու և ապա այդ նյութն ընդհանրացնելու համար: Մեր կարծիքով, Ս. Հարությունյանը հաջողությամբ հաղթահարել է իր առաջադիր բարդ խնդիրը: Մենագրության հեղինակը կարողացել է զիտել զիտականի զարգացումը այս կամ այն բնագավառում: Օրինակ, հայ ժողովրդական վեպի, վիպերգերի հետադուստության զարգացումը Ս. Հարությունյանը սկսում է սկզբից և աստիճանաբար ավելացնում այն նորը, որ ամեն մի ուսումնասիրության հետ բերում է գիտականը:

Իայց որպեսզի երևաք Արեղյանի կատարածի մեծությունը բանագիտության բնագավառում, անհրաժեշտ էր անդրադառնալ և նրա նախորդների աշխատանքին: Մինչ այդ հրապարակի վրա էին Մ. էմինի և Հ. Գաթրճյանի աշխատությունները, որոնց մեջ ուշադրություն էր դարձվում հայ ժողովրդական բանահյուսությանը, մասնավորապես Մ. Խորենացու Պատմության բանահյուսական փաստերի ուսումնասիրմանը և դրանով իսկ հերքվում սեփական դիցարանություն շունենալու մինչ այդ տարածում ստացած միանգամայն սխալ կարծիքը: Հրապարակի վրա էր նաև Ստ. Պալասանյանի «Հայ դրականության պատմության» I հատորը, որ նվիրված էր բանավոր ստեղծագործությանը: Ե. Սրվանձտյանցը նոր էջ գրեց բանահավաքման պատմության մեջ, հայտնագործելով «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռը» և սկիզբ գրեց ժողովրդական վեպի և բանահյուսության հավաքման գործին:

Հանդես գալով նրանցից հետո, Արեղյանը տրորված ճանապարհով չի գնում: Նա հայ ժողովրդական վեպի հայտնագործող-բանահավաքն է Գ. Սրվանձտյանցից հետո, իսկ վեպի ուսումնասիրման առաջնության պատիվը պատկանում է նրան: Այս է Ս. Հարությունյանի մի և՛ զրազանցությունը:

Խնդիրն այն չէ, որ Արեղյանը ջանադրաբար գրադվել է ժողովրդական վեպի խորիմաց հետազոտությամբ և բանահավաքական գործով: Նա թե՛ իր նախորդների և թե՛ իր հավաքած աշխատական փաստերն ընդհանրացրել է և ընդհանրացումների հիման վրա ստեղծել հայ ժողովրդական վեպի վերաբերյալ տեսությունը: Ս. Հարությունյանի աշխատության հիմնական նպատակներից մեկը այս բանը բացահայտելը և լուսաբանելն է: Նա իրավացիորեն գտնում է, որ Արեղյանը խոշոր արդյունքների հասավ, որով-

հետև զինված էր մի կողմից ժամանակի հայ բանագիտության ձևերը բերումներով և մյուս կողմից՝ ուսու և եվրոպական բանագիտության նվաճումներով, ստեղծագործաբար կիրառելով դրանք: Արեղյանը հայ բանագիտությունը հասցրեց որակական այնպիսի բարձրության, որի վրա գտնվում էր ուսական և եվրոպական միտքը: Այս ճիշտ և զրահանգման հասնելու համար Ս. Հարությունյանն օգտագործել է Արեղյանի ձևերի տակ եղած դրավոր և բանավոր այն հուշարձանները, որ սկսվում են վաղագույն առասպելներից, հետո հանդես գալիս «Պարսից պատերազմ» անունով, փոխարկվում «Տարոնի վեպի» և վերջապես ամբողջանում «Սասնա ծռերով»: Այս զարգացումը դիտվում է իրական-հասարակական հարաբերությունների փոփոխման և նրանց հետ սերտ կապի միջոցով: «...Մատերիալիստական պատմահայեցողությամբ է Արեղյանը հավաստում հայոց առաջին հին վեպի գոյությունը, — գրում է Ս. Հարությունյանը, — և ապա բացահայտում նրա սկզբնավորման ու զարգացման տեսությունը: Եվ պատահական չէ, որ վիպական անջատ տարրերը մեկ միասնական ամբողջության մեջ համախմբվելու և կենտրոնանալու վիպական ընթացքը պատճառաբանում է դարձյալ հասարակական-քաղաքական դրդումներով, այն կապելով զարգացող ֆեոդալիզմի և բարձրացող հայ կենտրոնացված պետականության շահերի ու խնդիրների միավորման հետ» (էջ 170):

Պատմական այս ելակետը ուսումնասիրողի ձեռքին կարևոր բանալի է, որը հնարավորություն է ընձեռում ճիշտ հասկանալ մասնավորապես իրականության հետ բանահյուսական հուշարձանների ունեցած առնչություններն ուսումնասիրելու Արեղյանի նպատակադրումը: Պատմականության բացահայտումով է պարզվում հայ ժողովրդական վեպի զարգացման տեսությունը: Դրանով իսկ մենագրության մեջ հիմնավորվում է Արեղյանի հասարակական-քաղաքական սուր զգացողությունը: Այդ զգացողությունից անանջատ է դիտվում վեպի ընդհանուր դադալաբարանության մեկնաբանումը:

Ներկա աշխատության մյուս բաժնում դիտարկվում է Արեղյանի զարգացումը քննադատական առաջին քայլերից (առցյալ դարի 80-ական թթ.) մինչև դրականագիտական այնպիսի հիմնածավալ մի աշխատություն ստեղծելը, որպիսին «Հայ հին դրականության պատմությունն» է:

Մենագրության հեղինակը հավաստում է, որ Արեղյանը սովորական ճանապարհով չի գնացել, այլ ընտրել է դիտության մեջ դժվարինը՝ հաղթահարելու ուղին: Սկզբնաքայլերը կատարելիս նա առաջնորդվել է ժամանակի համար ամենաառաջադիմական համարվող ուսուլիզմի քննադա-

տական մեթոդով, ընդ որում խորապես դիտակցելով այն նոր որակը, որ բերում էր ռեալիզմը 1880—1890-ական թթ.։ Այդ ժամանակ հրապարակ էին մտնում դրական նոր գեմքեր։ Անհրաժեշտություն էր անաչառ քննադատություն, որն առաջ մղեր դրականությունը, տեսներ նորը և հեռանկարային և միաժամանակ պայքարեր դրականության մեջ հայտնվող բացասական երեւելիքների դեմ, որոնք կարող էին խանգարել նրա առաջադիմությանը։ Հետաքրքրական են Հովհ. Թումանյանի, Հ. Հակոբյանի, Հովհ. Հովհաննիսյանի և այլ գրողների ստեղծագործությունների վերաբերյալ Արեղյանի քննադատական դիտողությունները, ինչպես նաև «Գրական դպրոցներ» տեսական ուսումնասիրությունը։

Ինչպես տեսնում ենք, այս հարցերում ևս Ս. Հարությունյանը չի մոռանում Արեղյանի որդեգրած պատմականության սկզբունքի կիրառումը, որը քննադատի և դրականագիտի հաջողության պայմաններից մեկն է։

Եվ ահա քննադատական-դրականագիտական այս փորձը մի սկիզբ էր դրականության տարբեր երևույթների մեջ խորամուխ լինելու ճանապարհին։ Այդ փորձն էր, որ դիտականին օգնեց զբաղվելու և հայ հին գրականության հարցերի մշակմամբ։ «Այսպես, ահա, հայ հին գրականության անդաստանում Արեղյանի կատարած մոտ կեսդարյա տարբեր բնույթի աշխատանքներն ու հետազոտությունները նվիրված էին մեր հին գրականության հանդուցային խնդիրներին, դրական նշանավոր գեմքերին ու երեւելիքներին, որոնք լինելով հայ հին գրականության դիմորդ արտահայտությունները տարբեր դարաշրջաններում, իրենց մեջ էին խտացնում և բնորոշում մեր հին գրականության պատմությունը, նրա զարգացման միտումներն ու ուղղությունը սկսած նրա սկզբնավորման ակունքներից մինչև նոր ժամանակները», — գրում է մենագրության հեղինակը։

Արեղյանից առաջ եղել են հայ հին գրականությունն ուսումնասիրողներ (Գ. Զարբհանալյան, Ստ. Պալասանյան, Հ. Գաթրոնյան)։ Սակայն նա նրանցից հետո նոր խոսք ասաց։ Ո՞րն էր այդ նոր խոսքը։ Նախ՝ մինչ այդ եղած դրականության պատմությունից, որի մեջ ամեն ինչ խառն էր և լուվանդակում էր շատ առարկաներ՝ պատմագրություն, բժշկասիրություն, գեղարվեստական դրականություն և այլն, Արեղյանը առանձնացրեց գեղարվեստական դրականությունը։ Այնուհետև նա ստեղծեց հին գրականության պատմության դիտական պարբերացումը, սխառնավորեց և ստեղծեց դրականության պատմության համակարգը, բազմաթիվ փաստերի տեսական ընդհանրացումների հիման վրա տալով նրա զարգացման ընդ-

հանուր օրինաչափությունները։ Արեղյանը իր պատմության մեջ մեծ տեղ էր հատկացնում թարգմանական դրականությանը, դրանով իսկ ցույց տալով, որ հայ դրականությունը, իր ինքնուրույնությամբ հանդերձ, ժամանակին մեկուսացած չի եղել օտար մշակույթներից։

Գիտական ճշգրտություն, մեթոդաբանական հստակ սկզբունքներ առաջադիր հարցերի լուծման ժամանակ, — ահա Ս. Հարությունյանի ելակետերը, առանց որոնց դժվար էր բնորոշել Արեղյանի կոթողային գործի պատմական և դիտական նշանակությունը։

Ակնհայտ է Արեղյանի վաստակը տաղաչափության ուսումնասիրման մեջ։ Մենագրության հեղինակը ընդգծում է, որ Արեղյանը չի սահմանափակվում միայն հասարակական-գաղափարաբանության պատմական և արդիական շրջանակում։ Նա դրան զուգակցում է դրական ձևերի հետազոտումը իբրև անհրաժեշտություն։ Դրանց մեջ է մտնում և տաղաչափությունը։

Հայ տաղաչափության հետազոտումը ևս սկզբնավորվել էր Արեղյանից առաջ։ Սակայն նրա ուսումնասիրությունը դեռևս դպրոցական նեղ նպատակներից այն կողմ չէր անցնում և խիստ համառոտ բնույթ էր կրում։ Եվ ապա, հին և նոր բանաստեղծության տաղաչափության ուսումնասիրությունը կատարվում էր մակերեսային և սահմանափակ ըմբռնումներով։ Արեղյանն ուսումնասիրում է հայերենի տաղաչափական բնույթը դիտական խորությամբ, սահմանում է նրա առարկան և խնդիրները, մշակում նրա հիմունքները, նորմավորում, մի խոսքով, դիտական տեսք տալիս նրան։

Քննականագիտության մեջ ևս դիտականը ստեղծել է մնայուն արժեքներ, այն քերականագիտության, որի մեջ իրենց լուծման էին մոծել Շրոդերն ու Միխիլար Սեբաստացին։ Ա. Այտրեյանը և Ստ. Պալասանյանը և այլ խոշոր գեմքեր։ Արեղյանը նրանց աշակերտն է և ստեղծագործաբար զարգացնում է նրանց լեզվաբանական ըմբռնումները։ Նա զարգացրեց հայացքներ, որ արմատավորվել էին վերջին շրջանի ընդհանուր լեզվագիտության դանձարանում։ Բնականաբար Արեղյանը քննական նոր մոտեցում պետք է ունենար նախկին հայացքների նկատմամբ և պետք է փորձեր ազատագրել լեզվական գիտությունը հին մեթոդների կաշկանդից մրթնորոտից։ Այն, որ նրա լեզվական ուսմունքը դեռ այսօր էլ այնքան ընդգծված ուշադրության է արժանանում լեզվաբանների լայն շրջաններում, լեզվի գիտական-արդիական սկզբունքների մշակման, նորացման ու հարստացման առումով, ցույց է տալիս Արեղյանի աշխատանքի արժեքավորությունը։ Արեղյանը եղել է նաև տեքստաբան, կազմել և հրատարակել է արժե-

քավոր բնագրեր, տարրեր բնույթի բառարաններ, հարստացրել հայերենի բառազանձը: Սրանց բավական տեղ է հատկացրել իր մենագրության մեջ հետազոտողը:

Ուսումնասիրության միջով կարմիր թելի նման անցնում է մի հիմնական գաղափար: Այդ այն է, որ Արեղյանը, լինելով լայն հետաքրքրությունների տեր, միաժամանակ սովորական մի գիտնական չէր, այլ խոր ու հիմնավոր հայացքի, երկաթյա տրամաբանության տեր մի մտածող, երաժշտականության և գիտական սրատեսության շնորհիվ նա եղել է իսկական նորարար հայագիտության տարրեր ձյուղերում:

Փաստի իմացության Արեղյանի կարողությունը Ս. Հարությունյանը սերտորեն ղուգակցում է ընդհանրացնողի նրա խոշոր ձիրքի հետ և առաջադրում այն, որ Արեղյանը ոչ միայն մասնակի խնդիրների հետազոտող է, այլ առաջին հերթին կնճռոտ պրոբլեմների ընդհանուր կապակցությունների, որոնք քննական հայացքի և մտքի տրամաբանության ուժով համակարգման են ենթարկվում և դառնում կուռ ուսմունք:

Արեղյանը բարդ հեղինակ է: Այդ բարդությունը պահանջում է լրջություն և, որ կարևորն է, ձգրություն: Եթե պակաս են այդ հատկանիշներից մեկն ու մեկը, կխեղաթյուրվի և գիտնականի գիմանկարը: Աշխատության հեղինակն ունի այդ հատկանիշները: Տեղական և տեղացի աշխատանքով Ս. Հարությունյանը ստեղծել է հայրենասեր մարդուն և գիտնականին նվիրված մի գիրք, աշխատել է բացահայտել բանասիրության մեջ նրա ծառայությունների նոր որակը:

Մենագրության հեղինակը առաջադրում է այն միտքը, թե Արեղյանը իր գիտական հայտնաբերումներով նոր սերնդի գիտնականների համար մի իսկական դպրոց է, և նրանք, ովքեր կըրջանցեն այդ դպրոցը, գիտության մեծ մայրուղուց դուրս կգնեն իրենց:

Աշխատության հեղինակի ամեն մի տողում

դրսևորվում է նրա սերն ու ակնածանքը, ուշադրությունը այդ դպրոցի նկատմամբ:

Պետք է նկատել, որ Արեղյանի կյանքի ու գործի ուսումնասիրության նախաձեռնությունն իսկ ինքնին գնահատելի է: Հարությունյանը կարողացել է հաջողությամբ բացահայտել ակադեմիկոս գիտնականի տեղը և դերը XIX դ. վերջի և XX դ. հայագիտության մեջ, ցույց տալ նրա խոշոր ավանդը:

Շատ են ու բազմազան Ս. Հարությունյանի աշխատության մեջ արժարժված հարցերը: Իմ հենց այդ է պատճառը թերևս, որ նրա դքոշ էջերում նկատվում է նյութի չափազանց առատություն: Այդ առատությունը երբեմն նկարագրականության է փոխվում և ինչ-որ չափով խանգարում հեղինակի որոշ մտքերի ընդգծմանը: Մեր կարծիքով, նյութի որոշ բեռնաթափումը, հատկապես մեջբերումների առատ օգտագործման վերացումը, առավել ևս հստակ ու նպատակասլաց կդարձնեն աշխատությունը:

«Գրական դպրոցների» մեջ բավական հետաքրքրական գծեր նկատելով, մենագրության հեղինակը չի նշել, որ դա ամբողջական ձևով հայ նոր դրականության մեջ դրական ուղղությունների պարբերացման առաջին փորձն է, մի բան, որ այդ ուսումնասիրության պատմական արժեքն է բնորոշում:

Առանձին գեպերում առկա է որոշ անքննադատ վերաբերմունք: Բավարարվենք նոր ուղղագրության հարցով: Այն, որ իր ժամանակին նոր ուղղագրությունը դրական դեր կատարեց, ոչ ոք չի միտում: Բայց չի կարելի անտեսել, որ այդ ուղղագրությունը ունեւ որոշ պակասություններ:

Ավարտելով մեր խոսքը, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ գրված է մի լավ մենագրություն: Դա առաջին ամբողջական և հաջողված աշխատությունն է՝ նվիրված հայագիտության մեծ երախտավորին: Այդ աշխատությունը արժանի ներդրում է հայագիտության և արեղյանագիտության մեջ:

Լ. ԱՍՄԱՐՅԱՆ

Э. М. ДЖРБАШЯН, *Поэзия Туманяна*. Перевод с армянского С. А. Гуллакян, М., изд-во «Художественная литература», 1969, 280 стр., цена 70 коп.

Туманяновские юбилейные дни позади. Они были плодотворными. Одним из значительных приобретений в эти дни явилась книга профессора Э. Джрбашяна.

Годы посмертной литературной жизни Туманяна утвердили его славу великого творца, вместе с тем, уже в который раз,

утвердили и ту истину, что подлинный писатель бессмертен. В книге Э. Джрбашяна раскрывается не только мир Туманяна, но и секрет неувядаемости его поэзии.

Путь к вершинам литературы и для очень талантливого художника не легок.

В 1890—1892 гг. вышли в свет пер-